

5.9. Հյուրանոցների աշխատանքը 2000թ. առաջին կիսամյակում

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ամփոփ տվյալների, 2000թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գործել են 52 հյուրանոց՝ 6382 մահճակալ-տեղ միաժամանակյա տարողությամբ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7606 մահճակալ-տեղ միաժամանակյա տարողությամբ 61 հյուրանոցի դիմաց), այդ թվում քաղաքներում՝ 49 հյուրանոց՝ 6339 մահճակալ-տեղ միաժամանակյա տարողությամբ, գյուղական վայրերում՝ համապատասխանաբար 3 և 43:

Հյուրանոցներ գործել են հանրապետության 48 քաղաքներից 27-ում և 3 գյուղական վայրերում:

2000թ. առաջին կիսամյակում հանրապետության հյուրանոցների ընդհանուր մակերեսը կազմել է 243.6 հազ. քառ. մ, որից վարձակալությամբ տրվածը՝ 11.6 հազ. քառ. մ կամ 4.8%: Քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշները կազմել են 243.1, 11.6 և 4.8% :

Բոլոր հյուրանոցային օգտագործման համարների բնակելի մակերեսը կազմել է 81.5 հազ. քառ. մ կամ ընդհանուր մակերեսի 33.5%-ը: Քաղաքային բնակավայրերի հյուրանոցների մոտ այդ ցուցանիշները կազմել են 81.1 հազ. քառ. մ կամ 33.4%:

:

Հանրապետության քաղաքային և գյուղական վայրերում գործող հյուրանոցային համարների քանակն ըստ տեսակների

	Բոլոր համարների քանակը, միավոր	հյուրանոցային օգտագործման համարներ	այդ թվում որից՝				ոչ հյուրանոցային օգտագործման տրված համարներ
			շքասենյակ	լյուքս	կիսալյուքս	սովորական	
Ընդամենը	4034	3453	38	230	470	2715	581
այդ թվում քաղաքային վայր	4009	3428	38	230	456	2704	581
գյուղական վայր	25	25	-	-	14	11	-

2000թ. առաջին կիսամյակում հանրապետության հյուրանոցների փաստացի զբաղվածությունը կազմել է 49.3 հազար համար-օր, մահճակալների զբաղվածությունը՝ 71.2 հազար մահճակալ-օր, որից քաղաքային վայրերի հյուրանոցներում համապատասխանաբար՝ 49.2 հազար համար-օր և 70.9 հազար մահճակալ-օր: Երևան քաղաքի հյուրանոցների այդ ցուցանիշները կազմել են՝ 39.1 հազար համար-օր և 57.3 հազ.մահճակալ-օր:

Հանրապետության հյուրանոցներում արտասահմանյան քաղաքացիների զբաղեցրած համար-օրը կազմել է 28.0 հազար, մահճակալ-օրը՝ 38.2 հազար, որը կազմել է ընդհանուր համապատասխան զբաղվածությունների 56.8% և 53.7%-ը:

2000թ. առաջին կիսամյակում հաշվետվություն ներկայացրած հյուրանոցների դրամական մուտքերը կազմել են 1674.5 մլն. դրամ կամ 0.87 դրամ հյուրանոցների հիմնական ֆոնդերի 1 դրամի հաշվով: Մուտքերի 84.4%-ը ստացվել է շահագործումից, 7.4%-ը՝ վարձակալության տրված տարածքից, 2.5%-ը՝ լրացուցիչ վճարովի ծառայություններից, մնացածը՝ այլ բնույթի մուտքեր են: Հյուրանոցների շահագործումից ստացված մուտքերի 78.6%-ը ստացվել են արտասահմանյան քաղաքացիներից:

Հյուրանոցների դրամական ծախսերը կազմել են 1893.7 մլն. դրամ: Ծախսերի կառուցվածքը հետևյալն է. նյութական ծախսեր՝ 10.9%, ոչ նյութական ծառայությունների

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

վճարումներ՝ 36.7%, աշխատավարձի ֆոնդ՝ 21.7%, գույքի և սարքավորումների ձեռք բերման վրա կատարված կապիտալ ներդրումներ՝ 2.7%:

Հանրապետության հյուրանոցային տնտեսության ծախսերը գերազանցել են մուտքերին 219.3 մլն. դրամով կամ 13.1 %-ով:

Հյուրանոցների գործունեության հիմնական ցուցանիշները

	Ընդամենը	այդ թվում			
		քաղաքային		գյուղական բնակավայրերում	
		ընդամենը	որից՝ Երևանում		
Տարեկան զբաղվածությունը, հազ. մահճակալ-օր	71.2	70.9	57.3	0.3	
այդ թվում՝ տրվել է արտասահմանյան քաղաքացիներին	38.2	38.2	37.3	-	
Մուտքերը, մլն. դրամ	1674.5	1672.5	1584.9	2.0	
այդ թվում՝ մուտքեր շահագործումից	1412.7	1411.0	1351.0	1.7	
որից՝ արտասահմանյան քաղաքացիներին տրված տեղերից	1110.8	1110.8	1105.8	-	
Ծախսերը, մլն. դրամ	1893.7	1892.2	1807.7	1.5	
Մեկ մահճակալ-օր շահագործման հաշվով, հազ. դրամ	մուտքերը	19.8	19.9	23.6	5.8
	ծախսերը	26.6	26.7	31.5	5.1